շնորհաց առատաձիր զեղման խորհրդաւոր ժամին,—յիշելով միանգամայն, որ 1600-րդ տարին բոլորում է այն յաւերժայիշատակ օրից, երբ երկնային ցուցմամբ հրաշակերտ տաճարի լուսեղէն կամարները ձգուեցան, հովանի և անքոյթ նաւահանգիստ լինելու Հայութեան՝ դարերի յորձանքի դէմ:

# ՊԱՇՏՕՆԱԿԱՆՔ

## ՔԱՂՈՒԱԾՔ Ի ԿՈՆԴԱԿԱՑ Վ.ԵՀ. ՀԱՅՐԱՊԵՏԻ.

### Ա.

*Հայրապետական տնօրինութիւնք.*

Կոնդակ *յանուն Տեր. Տ. Ներսէս արքեպս.-ի առաջնորդին Հայոց Ն. Նախիջևանի և Բեսսարաբիոյ, որով շնորհի արտօնութիւն Ն. Նախիջևանցի Սարգսի Նիկողայոսեան Քրիստեանց և կնոջն նորա Վարվառեայ՝ յետ մահու նոցա թաղել ի գաւթի ս. Աստուածածին եկեղեցւոյ քաղաքին, պատուիրելով տանել գնուիրաբերեալն նոցա գումար* 3000 *րուբլեաց յօգուտ յիշեալ եկեղեցւոյ. Թ.* 576:

— *Յանուն Տեր. Տ. Գարեգին եպս.-ի, փոխանորդ վանուցն Սանահնի, որով պատուիրի սահմանել ռոճիկ վան Զաքարեայ աբեղայի տասն րուբլի առ ամիսն. Թ.* 592:

—Յանուն վիճ· կոնս··ին Հայոց Երեւանայ, որով պատուիրէ կալ ըստ աճրդախօսութեանն պայման նօտարական ընդ վարձակալին՝ յաղագս տալոյ ի վարձու զվարելահողս վանուցն ս· Ստեփանոս Նախավկային, որ ի Դարաշամբ· թ· 596։

— Յանուն Ամեն· Պատրիարքին Հայոց Թուրքիոյ Տ· Մաղաքեայ Արքեպս··ի, որով յանձնարարէ տալ ընթացս գործոյ ամուսնալուծութեան Կ· Պոլսեցի Տիկին Ագնուէ Դարագաշեան· թ· 600։

— Յանուն Գեր· Տ· Սուքիաս արքեպս··ի փոխ· Թեմակալին Հայոց Երեւանայ, որով առաջադրէ անօրինել՝ տալ Սիմէօն քահ·ի Տ· Սիմէօնեանց Ալէքսանդրապոլ քաղաքի հարիւր ծուխս ի ծխոց հանգուցեալ քահ··ից ս· Փրկիչ եկեղեցւոյ տեղւոյն և փոխադրել զնա յեկեղեցին յայն· թ· 610։

— Յանուն Տ· Սահակ վարդ··ի Բաղդասարեան, որով կարգեցաւ ի փոխանորդ վիճակին Հայոց Ալէքսանդրապոլի· թ· 612։

— Յանուն Գեր· Տ· Սուքիաս արքեպս··ի փոխ· Թեմակալին Հայոց Երեւանայ, որով յայտ արարաւ կարգումն Տ· Սահակ վարդ··ի Բաղդասարեան ի փոխանորդ վիճ··ին Հայոց Ալէքսանդրապոլի և պատուիրեցաւ անօրինել առ այս զարժանն· թ· 613։

— Յանուն Սինոդի ս· Էջմիածնի, որով պատուիրէ թողուլ անպահանջ զ200 ր··, զոր Տ· Արսէն վարդապետի բարձեալ է յեկամտից գործակալութեան Բագուայ իբրև զճանապարհածախս վասն գալոյ ի ս· Էջմիածին և վերադարձին ի Բագու· թ· 616։

— Յանուն Գեր· Տ· Գրիգոր եպս··ի, առաջնորդին Հայոց Արցախայ, որով յայտնեցաւ կարգումն Տ· Անտոն վարդապետի Վարդազարեան ի վանահայր վանուցն Գանձասարայ, ազատ կացուցմամբ Տ· Նիկողայոս վարդ··ի ի պաշտամանէն· թ· 618։

— Յանուն Տ· Անտոն վարդ··ի Վարդազարեան, ի նոյն միտս· թ· 619։

— Յանուն վիճ· կոնսիստորիայի Հայոց Աստրախանի, որով թոյլատրէ պսակ Ն· Նախիջեւանցի (վերաբնակեալ ի Ն·

*Արմաւիր) Գէորգայ Կարապետեան Դուլթեանց ընդ օրիորդ Զարգարայ Յովհաննիսեանց. թ.* 627։

---

## *Հայրապետական պարգեւ.*

Կոնդակ *յանուն Կարապետ քահ.-ի Ղազարեան Բուղդաշէն գեղջ, որով շնորհին նմա իրաւունք կրելոյ գլանջախաչ քահանայական. թ.* 607։

---

## *Հայրապետական օրհնութիւնք եւ շնորհակալիք.*

Կոնդակ *օրհնութեան և գոհունակութեան յանուն Գէորգ աղայի Խասամաղայեան Մելիտոպոլցւոյ, յաղագս նուիրաբերելոյ նորա* 300 *ր. փանուցն ս. Խաչի, որ ի Հին Ղրիմ. թ.* 577։

— *Օրհնութեան և գոհունակութեան յանուն Տիկին Նաւնեայ Յովհաննիսեանց, վասն խոստման նորա կառուցանել ի գաւթի ս. Փրկիչ եկեղեցւոյ Բաթում քաղաքի սենեակս ի սեփականութիւն եկեղեցւոյն. թ.* 591։

---

## ՔԱՂՈՒԱԾՔ ՍԻՆՈԴԻ ՕՐԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐԻՑ.

*Մարտ* 3. *Սինոդը տեղեկանալով Կովկասի Հայոց լրագիրներից, իբրև թէ Տ. Խաչիկ վարդապետի յանձնարարութեամբ զանազան գաւառական քաղաքներում և գիւղերում հանգանակութիւններ են լինում «Զուարթնոց» եկեղեցու համար, առանց օրինական կարգով պատշաճաւոր թոյլտու-*